

## ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ


### ՄԱՏԵՆԱԳՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԿԱԶՄԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեռագրերի կազմերի արձանագրությունները բաղկացուցիչ մասն են կազմում արձանագրագիտություն<sup>1</sup>, որի նպատակն է ուսումնասիրել քարի, մետաղի, կաշվի, փայտի եւ այլ նյութերի վրա փորագրված, դրոշմված կամ դաշված, ինչպես նաեւ հատուկ մեխանով (կամ այլ ներկանյութով) մակագրված արձանագրությունները: Ակադեմիկոս Հ. Օրբելին, արձանագրությունները բնութագրելիս նկատում է, թե՛ «Չկա համարյա ո՛չ մի հայկական մոնումենտալ հուշարձան, տաճար, մատենադարանային շենք, գավիթ ու այլ եկեղեցական կառուցվածք, պալատ, բերդաշտարակ, վերջապես գերեզմանային կոթող, սահմանաբաժան քար, որ իր վրա չունենա արձանագրություն, որը համարյա միշտ թվագրված է եւ շատ հաճախ պատմում է այդ հուշարձանի կառուցման կամ կանգնեցման մասին: Ճիշտ այդպես էլ արձանագրված է կիրառական արվեստի եւ գեղարվեստական արդյունագործության ստեղծագործությունների մի զգալի մասը, հատկապես եկեղեցականը, ինչպես՝ մատյանների կազմերը, խաչերը, գավազանները, սկիհները, նշխարատուփերն ու տապանակները եւ այլն: Այսպիսով, հայկական հուշարձանների ճնշող մեծամասնությունը անվիճելիորեն թվագրվում է այդ արձանագրություններով, եթե ոչ ստույգ նշելով տարին, գոնե այն որոշելով մոտավորապես. դրա շնորհիվ վերանում է լուր հնագիտական տվյալների հիման վրա հուշարձանի անստույգ եւ կասկածելի թվագրությունը: Իսկ այն հուշարձանները, որոնք իրենց վրա թվական չունեն, թվագրվում են շրջապատում եղած այլ բազմաթիվ թվագրվածների օգնությամբ, որով եւ որոշվում են նրանց ժամանակագրական սահմանները: Համապատասխան արձանագրությունների հետագա ուսումնասիրությունը հայկական արվեստի պատմության մի էջը չի, որ բացելու է»<sup>2</sup>:

Ձեռագրերի կազմերի արձանագրությունները եւս հավաստի սկզբնաղբյուրներ են եւ նրանցից տարբերվում են միայն նյութով, որի վրա գրվել են: Ձեռագրի կազմերի արձանագրությունների ուսումնասիրությունը, վիմագրություն համեմատությամբ, ունի որոշ դյուրություններ:


<sup>1</sup> Միջազգային տերմինաբանությամբ՝ էպիգրաֆիկա (հուն. էպի- մակ՝ վրա, երես եւ գրաֆիկա (գրություն), որ թարգմանաբար նշանակում է մակագրություն). տե՛ս Գ. Գրիգորյան, Հայկական վիմագրություն, Երեւան, 2000, էջ 9:

<sup>2</sup> Դիվան հայ վիմագրության, պր. I, Երեւան, 1966, էջ IX (այսուհետև՝ Դիվան): Ընդգծումները մերն են - Ա. Մ.:



Նկ. 1

Ձեռ. 10998, Ա. փեղկ. 1691 թ., նոր Ջուղա: Կազմող՝ Ազարիա դպիր:



նկ. 2

Ձեռ. 451, Ա. փեղկ. 1692 թ., Նոր Ջուղա: Կազմող՝ Ազարիա դպիր:


Այսպես. կազմարար վարպետներն իրենց՝ տարբեր ժամանակներում պատրաստած կազմերի արձանագրությունների համար օգտագործել են շարադրանքի միեւնույն կաղապարային ձեւը՝ փոփոխելով միայն կազմի ստեղծման թվականը: Օրինակ՝ Նոր Զուղայի կազմարվեստի դպրոցի հիմնադիր Ազարիա դպիրը № № 3194, 10998, 451 (նկ. 1 եւ 2) ձեռագրերի կազմերին թողել է արձանագրության միեւնույն շարադրանքը. «Գրեցաւ եւ կազմեցաւ ձեռամբ Ազարիէ», համապատասխանաբար՝ 1676, 1691, 1692 թթ.: Ձեռագրերի գրչության հիշատակարանների կամ հիշատակագրությունների բաղադրամասեր եւս կարելի է լրացնել կամ վերականգնել արձանագրության վնասված եւ պակասող բառը կամ բառակապակցությունը: Այսպէս. 1585 թ. Վանիկ գյուղի Աբ. Թեոդորոս վանքում Փիլիպոսի պատրաստած № 4812 Ավետարանի Ա փեղկի ներքեւում պահպանվել է վնասված արձանագրություն. «ՅՇԷՔՏԲ[...]/...» (նկ. 3): Ձեռագրի 212ա թերթում կարդում ենք հետեւյալ հիշատակագրությունը. «Զվերջին կազմոխս գտուրբ Կարմիր Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս գտէր Յովանէս, գոր տեսեալ գտուրբ Կարմիր Աւետարանս ի յայտեն հնացեալ էր, գոր վերեստին նորոգել ետուր հոգոյ իւր... Ես, սուտանուն Փիլիպոս, որ կազմեցի գտուրբ Աւետարանս ի թվ(ակա)ն(ի)ս Հայոց ՌՂԳ. (1585), ի գեաւղն որ կոչի Վանիկ, ի դուռն Սուրբ Թէոդորոսին...»: Հիշատակագրության շնորհիվ վերականգնվել է արձանագրության վնասված անձնանունը. «Յ(Ի)ՇԷՔ Տ(Է)Բ [ՅՈ]վ-[ԱՆԷՍԻՆ]//»: Մեկ այլ՝ № 9841 ձեռագրի կաշեկազմը նույն Փիլիպոսը կազմողը պատրաստել է 1586 թվականին Խաչգլուի լեռան Աբ. Սահակ վանքում: Ձեռագիր Ավետարանի երկրորդ փեղկի մեջտեղում կա «//.../ՏԻՄԵԻՉԱՄ//ՅՇԷ» արձանագրությունը (նկ. 4), որի ամբողջացմանն օգնում է ձեռագրի 293ա թերթին առկա հետեւյալ հիշատակագրությունը. «Զվերջին կազմողս սուրբ Աւետարանիս յիշեցէք ի Քրիստոս՝ զխոջայ Աւետիսն, գոր տեսեալ գտուրբ Աւետարանս ի ձեռն անաւրինաց ազատեաց եւ վերեստին նորոգել ետուր հոգոյ իւր... Եւ եղբարն՝ խոջայ Ամիրազին... Ես, սուտանուն Փիլիպոս, կազմեցի գտուրբ Աւետարանս ի լեռն սուրբ, որ կոչի Խաչգլուի, ի վանքն, որ կոչի Սուրբ Սահակ... ի թուակ(ան)ութիւն Հայոց ՌՂԵ (1586)...»: Հետեւապէս, արձանագրությունը կարդացել ենք այսպէս «[Չ]Խ[ՈՉԱՅ ԱԻԵ]ՏԻՍ ԵԻ ՉԱՄ[ԻՐԱՂԷՆ] Յ(Ի)ՇԷ[Ք]»:

Արձանագրություններն այլ փաստաթղթերի նման պահանջում են ուշագրի եւ զգուշավոր վերաբերմունք: Հ. Օրբելին նկատում է, որ. «Եթե ոչ մեկի մտքով չի անցնում վիճարկել թղթերի վրա գրված հրովարտականների, վավերագրերի եւ նույնիսկ ձեռագիր հիշատակագրությունների պատճենահանման հնարավորությունը, արտադրության ընթացքում նրանց աղավաղման եւ, վերջապէս, կեղծման հնարավորությունը, ապա, երբ խոսքը վերաբերում է վիճական արձանագրություններին, մեզ հասած եւ քարերի վրա փորագրված բոլոր ակտերը, չգիտես ինչու, բացարձակ հավաստի են համարվում, եւ այդպիսի վավերագրերի հավաստիության նկատմամբ ամեն մի երկբայություն առաջ է բերում տարակուսանք եւ թերահավատություն»:



նկ. 3

Ձեռ. 4812, Ա. փեղկ. 1585 թ., Սբ. Քեոդորոս վանք (Վանիկ գյուղ): Կազմող՝  
Փիլիպոս Հիզանցի:



Նկ. 4

Ձեռ. 9841, Բ փեղկ. 1586 թ., Սբ. Սահակ վանք (Խաչգլուխ լեռ): Կազմող՝  
Փիլիպոս Հիզանցի:

Մինչդեռ վիճական արձանագրությունների հետ էլ անհրաժեշտ է առանձնապես զգույշ լինել, քանի որ այդ վավերագրերը, ձեռագիր արձանագրություններից տարբերվելով միայն այն նյութով, որի վրա նրանք գրվել են, ձեռագրերի նման նույնպես արտագրվել են եւ ընդամին երբեմն ենթարկվել զանազան փոփոխությունների»<sup>3</sup>: Մաշտոցյան Մատենագարանի № 2673 ձեռագիրը (բովանդակությամբ՝ Խորհրդատետր) գրված է 1679 թ.: Կազմի Ա փեղկին կա ստացող տեր Աղեքսանդր վարդապետի արձանագրություն-հիշատակարանը. «Յ[հ] Շ[Ա] Տ[Ա] Կ է Ա. Ղ[է] ՔՍ[Ա] Ն Դ Բ Վ[Ա] Բ Գ Ե/Պ[Ե] Տ Ի Ն Ե Ի Ծ Ն [Ո] Ղ[Ա] Յ Ը Ն, Ի Թ Վ Ի Ն Ի Ճ Ի Ը (1679)» (նկ. 5): Ինչպես երևում է արձանագրության թվականից, կազմը գրչությանը ժամանակակից է: Եթե արձանագրությունում եւ ձեռագրի 16ա, 20բ թերթերի հիշատակարաններում նշված Աղեքսանդր վարդապետը նույն Աղեքսանդր Ջուղայեցին է, ենթադրելի է, որ կազմը պատրաստված է նոր Ջուղայում: Սակայն նոր Ջուղայի կազմարվեստի դպրոցի մեկ ուրիշ նման կազմ մեզ ծանոթ չէ: Ձեռագրի 17ա (1866 թ.) եւ 2ա (1880 թ.) հետագա հիշատակարաններում նշվում է Սբ. Ստեփանոս Նախավկա վանքը, իսկ առաջին պահպանակի վրա մատիտով նշված է նույն վանքին պատկանելը: Այս ամենից պարզ է դառնում, որ, թեեւ կազմին արձանագրված է Աղեքսանդր վարդապետի անունը եւ նշված է կազմի պատրաստման (1679) թվականը, ներկայիս կազմը պատրաստված է ավելի ուշ, ԺԹ դարում Ս. Ստեփանոս Նախավկա վանքում<sup>4</sup>: «Նման պարագաներում, - նշում է Հ. Օրբելին, - արձանագրությունների արժեքը մասամբ նվազում է այն բանով, որ նրանք մեզ են հասել ոչ թե բնագրով, այլ ընդօրինակված, այնուամենայնիվ նրանք չեն կորցնում իրենց նշանակությունը, քանի որ նրանց բովանդակության իսկությունը չի կարելի կասկածել, այդ առթիվ որեւէ հիմք չունենալու պատճառով»<sup>5</sup>: Հետագայում՝ 1713 թ. արդեն, կաթողիկոս Աղեքսանդր Ջուղայեցին Սբ. Էջմիածնում կառուցում է սեղանատուն, որտեղ արձանագրում է. «Ի թուին ՌՃԿԲ ես Ջուղայեցի Աղեքսանդր կաթողիկոս ամենայն Հայոց, շինեցի սեղանատունս ի վայելումն սրբոյ Էջմիածնի միաբանից վասն ձմռան»<sup>6</sup>: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մի շարք վիճագիր եւ ձեռագրերի կազմերի արձանագրություններ պատվիրվել են միեւնույն մարդկանց կողմից:

<sup>3</sup> Դիվան, պր. I, էջ IX-X: Այնուհետեւ Հ. Օրբելին բերում է Մարմաշենի կառուցման մասին արձանագրությունը. տե՛ս նույն տեղում, էջ X:

<sup>4</sup> Կազմողը եղել է անփորձ մեկը, որը, բարեբախտաբար, նոր կազմը պատրաստելիս փորձել է ընդօրինակել ձեռագրի նախնական, հավանաբար, վնասված կազմը՝ պահելով նաեւ վրայի արձանագրությունը:

<sup>5</sup> Դիվան, պր. I, էջ X:

<sup>6</sup> Կ. Կոստանեանց, Վիճական տարեգիր - Յուզակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 204, № 1713:



Նկ. 5

Ձեռ. 2673, Ա. փեղկ. ԺԹ դ., Սբ. Ստեփանոս Նախավկա վանք:





Նկ. 6

Ձեռ. 7690, Ա փեղկ. 1255 թ., Հոռոմկլա:

Այսինքն՝ կազմերին արված արձանագրությունները եւս լրացնում, ամբողջացնում են վիմագիր աղբյուրներում եղած տեղեկությունները, ինչպես նկատել է Կ. Ղաֆադարյանը, երբ Հաղբատի ու Սանահնի համար նշում է. «Պատմաբանն այդ երկու վանքերը պետք է ուսումնասիրի միասնաբար, որովհետեւ մեկը լրացնում է մյուսին, մեկը շարունակում է մյուսի նախաձեռնությունը»<sup>7</sup>: Բերենք նմանօրինակ մի քանի արձանագրություններ: Կոստանդին կաթողիկոսը Արցախի Ամենափրկիչ վանքի 1246 թ. վիմագիր արձանագրությունում նշում է. «Աստուծոյ շնորհին եւ Կոստանդին կաթողիկոս ամենայն Հայոց, միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգեւոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին, յիշխանութեան մեծի Զալալ Դաւիթ եւ առաջնորդութեան սորա տեառն Ներսիսի Աղուանից կաթողիկոսի. եւ այլ սպասաւորք սուրբ ուխտիս հաստատեցի Գ. (3) պատարագ ի տաւնի Տեառնդառաջի, Բ. (2) ինձ, Ա. (1) տէր Մարգարին. կատարիչքն արհնին յԱստուծոյ. ով հանէ զաւետարանս յեպիսկոպոսարանէս, ինքն եղիցի որոշեալ եւ հանեալ ի փառացն Աստուծոյ. ի թվիս ՈՂԵ (1246) էր»<sup>8</sup>, իսկ Հռոմիլայում 1255 թ. պատրաստել է տալիս Գ<sup>ur</sup> 7690 ձեռագրի արծաթե հանրաձանաչ կրկնակազմը, որի վրա արձանագրված է. «Ք[ՐԻՍՏՈ]Ս Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԵԱ Տ[ԵԱՌ]Ն Ա(Կ)ՈՍՏ/ԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ[Ն] ԵՒ ԾՆԱՒՂԱ/Յ ԻԻՐՈՅ, ԵՂԲԱՐՅ ԵՐ(Ի) ԵՂ/ԲԱԻՐՈՐԴԵԱՅ, ԱՄԷՆ: ԹՈՒԻՆ] ՉԳ (1255)» (նկ. 6): Հետաքրքրական է նաեւ Անիի 1909 թ. պեղումների ժամանակ գտնված Առաքելոց եկեղեցու դրսի արեւելյան պատի Կոստանդին կաթողիկոսի 1251 թ. հրամանագրած առաքելական կանոնը եպիսկոպոսներին եւ առաջնորդներին. «ԹՈՒԱԿ[ԱՆԻՆ] /:Չ: /ՇՆՈՐՀԻԻՆ Ա(ՍՏՈՒԾ)Յ. ԵՒ ՀՐԱՄԱՆԱԻ Տ(ԵԱՌ)Ն ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻ[Կ]/ՈՍԻ ԵՒ ՄԵԾԻՆ /ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՇԱՀՆՇԱՀԻ ԱՐՁԱՆԱԳՐԵՅԱԻ /ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆՔՍ, ՈՐ ԹԷ ՈՔ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԿԱՄ ՅԱՌԱՋՆ/ՈՐԴԱՅ ԿԱՇԱՌԱԻՔ ԿԱՄ ԱՆՄԻՐՈՒ ԵՐԷՅ ԱՌՆԷ ԿԱՄ ԱՌԱՆ/Յ ՃՇԴԻԻ ԵՒ ՅՈՅԺ ԸՆՏՐՈՒԹԵ(ԱՆ) ԴԱՏԻ ՅԱ(ՍՏՈՒԾ)Յ, ԵՒ ԸՆԴ ՆՁՈՎԱԻՔ /ԼԻՆԻ ՅԵՐԻՍ Ս(ՈՒՐ)Բ ԺՈՂՈՎՈՅՆ, ՄԱՍՆ ԶՅՈՒԴԱՅԻՆ ԵՒ ԶԿԱՅԵՆԻՆ /ԱՌՅԷ, ԿԱՍԱՐՈՂՔՆ ԱԻՐՀՆԻՆ ՅԱ(ՍՏՈՒԾ)Յ»<sup>9</sup>:

Ղարաբուլազ գյուղի Գյուղամիջի եկեղեցու խաչքարին արձանագրված է. «Ս(ՈՒՐ)Բ Խ[Ա]ՉՍ /ԲԱ/Ր/Ե/Խ[ԱԻ]Ս /ՇԱ/ՏԱԽ/ԵՅ/Ի Տ(Է)Ր ԴԱԻԹ[ԻՆ]»<sup>10</sup>, իսկ Մատենադարանի № 6376 Ավետարանի՝ 1617 թ. պատրաստված կազմի երկրորդ փեղկին արձանագրված է. «ԴԱԻԹ /ԷՐԷՅՍ [Յ]/ԻՇԷ ՏԷՐ, Տ(Է)Ր» (նկ. 7): Ձեռագրի 190ա թերթի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Շատախեցի

<sup>7</sup> Կ. Ղաֆադարյան, Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները եւ վիմական արձանագրությունները, Երեւան, 1963, էջ 5:

<sup>8</sup> Կ. Կոստանեանց, նշվ. աշխ., էջ 89, արձ. № 1246: (Գիվանի V պրակում ունի՝ յառաջնորդութեան տրայ. տէս Դիվան, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երեւան, 1982, էջ 114, արձ. № 377): Նշենք, որ Կոստանդին կաթողիկոսը հիշատակվում է 1243 թվակիր վիմագրում. տէս Կ. Կոստանեանց, նշվ. աշխ., էջ 86, արձ. № 1243C:

<sup>9</sup> Դիվան, պր. Ա, Անի ֆաղափ, կազմեց Հ. Ա. Օրբելի, էջ 14-15, արձ. № 54:

<sup>10</sup> Դիվան, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երեւան, 1982, էջ 242, արձ. № 871:



Նկ. 7

Ձեռ. 6316, Բ փեղկ. 1617 թ., Համասրա-Բակ գյուղ (Գանձակ):



Նկար 8.

Ձեռ. 6781, Ա. փեղկ. 1769 թ., Սբ. Էջմիածին:

Գավիթ երեցը ձեռագիրը նորոգել է կազմել է 1617 թ. Գանձակի Համասրա-  
Բակ գյուղում. «Ձնորալքաւղ սուրբ Աւետարանիս Գավիթ սուտանուն երէց... Ի  
երկիրս Գանձակոյ, ի ձորս Գանձոյ, գաւղս Համասրայ-Բակ կոչի, ի դրան սուրբ  
Ըստանոս (Ստեփանոս) յեկեղեցոյն: Թուայկանութիւն Հայոց ՌԿԶ. (1617)... Յի-  
շեսջիբ ի մաքրայփայլ եւ ի մեղսայքաւիչ աղավթս ձեր սուրբ Աւետարանիս  
կազմող Շատախեցի Գավիթ երէցս...»: Բերվածից կարելի է եզրակացնել, որ  
Գավիթ երեցի վիմագիր խաչքարը պատրաստվել է ժէ դ. առաջին քառորդում:

Գրիգոր վրդ. Նղվարդեցին 1769 թ. էջմիածնում արձնապատել է տալիս  
№ 6781 Ավետարանի կազմը, որի առաջին փեղկի սպիտակ ալի տակ թողնում  
է հետեւյալ մակագրությունը. «ԳՐԻԳՈՐ /Վ(Ա)ՐԿ(Ա)Պ(Ե)Տ ԵՂ/ՎԱՐԿԵ/ՅԻ» (նկ.  
8), իսկ 1771 թ. վիմագիր արձանագրությունից տեղեկանում ենք, որ էջմիած-  
նի լուսարար Գրիգոր վարդապետի աշխատասիրությունամբ վերանորոգվել են  
Մայր տաճարի բոլոր տանիքները. «Աստուծով վերանորոգեցաւ բոլոր տանիք  
սրբոյ տաճարիս եւ երկուց խորանացն իսկ ի ներքուստ եւ արտաքուստ հոգա-  
բարձութեամբ տեսոն Սիմէոնի սրբազան կաթողիկոսին Երեւանցոյ եւ աշ-  
խատասիրութեամբ լուսարար Գրիգոր վարդապետի Նղվարդեցոյ ի ՌՄԻ.  
Թուին մերոյ: Վարդապետ Գասպար»<sup>11</sup>:

Մաշտոցի անվան Մատենագարանի ձեռագրերի կազմերի արձանագրու-  
թյուններում կիրառված տառատեսակների ուսումնասիրությունները ցույց են  
տալիս, որ արձանագրությունները մեծ մասամբ, ինչպես վիմագրերում<sup>12</sup>, փո-  
րագրված կամ դրոշմված են երկաթագիր կոչվող տառատեսակով: Սակավ  
հանդիպում են բոլորգիր տառատեսակով (№№ 982, 3350, 4083, 4467, 4929,  
4968, 5549 եւ 7014), երկաթագրի եւ բոլորգրի խառը կիրառությամբ (№  
157), ինչպես նաեւ երկաթագրի մեջ առանձին բոլորգիր տառերի (Յ № №  
226, 253, 982, 3305, 3350, 10704, Զ № № 157, 214, Մ № 157, Ի № 920)  
կիրառմամբ արձանագրություններ: Կ. Ղաֆաղարյանը նկատում է, որ «...  
դրանք բոլորն էլ փորագրիչների անվարժության արդյունք են՝ ճիշտ այնպես,  
ինչպես այժմ գրվող գլխագիր ցուցակների եւ այլ նման տեքստերի մեջ ՌԻ գրե-  
լու փոխարեն գրում են ՈՒ, Յ-ն գրում են ՚ ձեռով եւ այլն»<sup>13</sup>:

Ինչպես ձեռագրերի գրչությունում եւ վիմագրերում, կազմերին արված  
արձանագրություններում եւս տեղ խնայելու նպատակով մի շարք բառեր,  
հատկապես սուրբգրային բառերը, կիրառված են հապավված ձևով: Հապավ-

<sup>11</sup> Կ. Կոստանեանց, նշվ. աշխ., էջ 213, № 1771a:

<sup>12</sup> Վիմագիր արձանագրությունների գրչության տեսակների, օգտագործված համառոտագ-  
րությունների (հապավմամբ գրվող բառեր, կցագրություններ, փակագրեր, ծածկագրու-  
թյուններ), վիմագիր բանաստեղծությունների մասին տես Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 44-  
78 եւ 84-87:

<sup>13</sup> Կ. Ղաֆաղարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երեւան, 1939, էջ 21 (նի-  
շատակում է 1. Ուխտատուր վանականի արձանագիրը 783 թ., 2. Մարիամ Սյունյաց իշխա-  
նուհու 874 թ., արձանագրությունը Սեւանում, 3. Սենեֆերիմ թագավորի 992 թ., վիմագիրը  
Սարիղամիշում):

ված բառի վրա դրվում է պատվի նշան (հորիզոնական գծիկ): Հապավմամբ առավել հանդես են գալիս տերունական հետեւյալ բառերը (հապավումը պահպանվում է նաեւ բառաթեքման ժամանակ).

	_ Աստուած (№№ 157, 5638, 5647, 6504),
	_ Տէր (№№ 5437, 5638, 5647, 6747),
	_ Յիսուս (№№ 5437, 5638, 5647, 5757),
	_ Քրիստոս (№№ 5437, 5638, 5647, 5649),
	_ Սուրբ (№№ 2582, 3238, 3528),
	_ Երուսաղէմ- (№ 3009):

Արձանագրութիւններում կիրառվում է նաեւ կցագրութիւն կամ կապ-գիր, որը հապավման կամ սղման այն ձեւն է, երբ տարբեր տառերի անհրաժեշտ ստեղծներն իրար ձուլվելով՝ գործածվում են իբրեւ ընդհանուր: Կցագրութիւններով են հանդես գալիս բազմաթիւ տառակապակցութիւններ<sup>14</sup>.

(ԱԲ) - ԶՕՀՐԱԲ, ԲԱԽՇԻԶԱԲԵՆ (№ 7775),

(ԱԿ) - ՅԻՇԱՏԱԿ (№ 7603),

(ԱՄ, ԱՄԱԲ, ԱՄԲ) - ԱՄՍՈՅ (№ 61), ԱՂԱՄԱԼԻՆ (№ 200), ՄԱՐԻԱՄ (№ 200), ՉԵՌԱՄԲ (№№ 1935, 2625, 3036), ՀԱՄԱԲԵՏԵԱՆԻ (№ 7775), ՉԵՌԱՄԲ (№ 10859),

(ԱՆ) - ՄԱՐԻԱՆԷ (№ 54), ՅՈՀԱՆՆԷՍ (№ 1935), ԱՏԵՓԱՆԵՆՈՍ (№ 3032),

(ԱՆԷ) - ՈՎԱՆԷՍԻՆ (№ 7979),

(ԱՆԻ) - ԹԷԱՆԻՆ (№ 9319),

(ԱՍԻ) - ՂՈՒԿԱՍԻՍ (№ 8694),

(ԱՐ) - ԱԻԵՏԱՐԱՆՍ (№ 332), ԱԶԱՐԻԷ (№№ 3036, 10998), ՄԱՐԿՈՍԻՆ (№ 3408), ԿԱՐՄԻՐ (№ 5140), ԿԱՐԱԽԱՆ (№ 5158),

(ԱԻ) - ԱԻԵՏԱՐԱՆՍ (№№ 2399, 3033), ՕՂԻՏԱԻՆ (№ 5639), ՅԱՐԻԱԻ (№ 7634),

<sup>14</sup> Կցագրություններով տառակապակցություններն արտահայտված են ընդգծված:



(ԱԻԵ) - ԱԻԵՏԻՍԻՆ (№ 7920),

(ԲԱ) - ՄՄԲԱՏ (№ 4919),

(ԲԻ) - ՅԱԿՕԲԻՆ (№ 5965),

(ԳԻ) - ԳԻՕՐԳՈՒՆ (№ 7634), ՍԱՐԳԻՍ (№ 8433),

(ԳՈ) - ՋԵՌԱՅԳՈՐԾ, ԳՈՀԱՐ (№ 8187),

(ԴԻ) - ՈՐԴԻ (№ 7640, 8940), ԶՈՐԴԻՆ (№ 10411),

(ԵԻ) - ԵՂԵԻ (№ 2582),

(ԷԱ) - ՄԻՔԱՅԷԼԻՆ (№ 7602),

(ԹԷ) - ԹԷՈՂՈՐՈՍԻՆ (№ 7750),

(ԹՎ) - ԹՎԻՆ (№ 205, 4658, 5633, 5638),

(ԻԷ) - ԳԱՐՊԻԷԼ (№ 7088),

(ԻՆ) - ԲԱԲԷԻՆ, ՍԱՐԱԻՆ, ՅԱԿՈԲԻՆ (№ 7239), ՇԻՆԵՅԱԻ (№ 9269),

(ԽԱ) - ԽԱԶՕՅԻՆ (№ 8960),

(ԿԵ) - ԿԵՕԶԼԷՎՅԻ (№ 7576),

(Կ Է) - ՅԻՇԱՏԱԿ Է (№№ 157, 6748, 7239, 7598),

(ԿԻ) - ԿՈՂԱԿԻՅ (№ 7239),

(ԿՈ) - ՆԻԿՈՂՈՍԻՆ (№ 7602), ՄԱՐԿՈՍ (№ 9422),

(ՂԴ) - ԲԱՂԴԱՍԱՐԻՆ (№ 9693),

(ՂԱ) - ՄՍԸՐԿՆՈՂԻ (№ 7603),

(ՄԱ) - ՄԱՐԻԱՆԷ (№ 54), ԽՈՌՈՄՍԻՄԱՅ (№ 253), ՄԱԱՍՊՈՒՌԻՆ (№ 2399), ՄԱՐԻԱՄ (№ 3716), ՄԱՐԳԱՐՏԻՆ (№ 5140),

**ԵՄԿԵՆ**

(ՄԱՐ) - ՄԱՐԳԱՐԱՅ (№ 5653), ՄԱՐԹԱՅ (№ 10832),

(ՄԻ) - ՄԻՔԱԷԼ (№ 7639),

(ՅԻ) - ՅԻՇԱՏԱԿ է (№№ 4919, 7603),



(ՆԱ) - ՄԻՆԱՅ (№ 5499), ՆԱՉԼՈՒԻՆ (№ 5649), ԳՈՒԼՆԱՉԱՐԻՆ (№ 6360),



(ՆԻ) - ՍԷՎԵՐԿԱՆԻՆ (№ 4060), ՆԻԿՈՂԱՅՈՍԻՆ (№ 7856),



(ՈՐ, ՈՐՈ) - ՂԵԼԻԿՈՐԱ, ԳՐԻԳՈՐԻՆ (հ<sup>տ</sup> 2399), ՈՐԳԻ (№ 2399, 5633), ՈՐ (№№ 6771, 6780), ՆՈՐՈԳԵՅԱԻ (№ 7920),



(ՈՒ) - ՀԱՆԳՈՒՅԵԱԼ, ԳԱԼՈՒՍ, ՎԱՅԵԼՈՒՄԻ (№ 205), ՆԱՉԼՈՒՆ (№ 253), ՄԵԼՔՈՒՄԻՆ (№ 3033),

(ՊԱՐ) - ՆՈՒՊԱՐԻՆ, ՀԱՆՊԱՐԻՆ (№ 8960),

(ՊԵ) - ԿԱՐԱՊԵՏԻՆ (№ 5639, 5653),

(ՊԷ) - ԻՈՒԹՂՈՒՂՊԷԻՆ (№ 7570),

(ՊԻ) - ԱՆԱՊԻՔԷԻՆ (№ 7597),

(ՊՈ) - ՊՈՂՈՍ (№ 239, 7598),

(Ս Է) - ՔԱՐԵԿՈՍ Է (№ 7858),



(ՍԻ) - ՊՕՂՈՍԻՆ (№ 200, 1978), ՄԱՀՏԵՍԻ (№ 5650),

(ՍԼ) - ԱՄԼՉԱՏԷ (№ 1679),

(ՐԻ) - ՍԱՖԱՐԻՆ (№ 5736),



(ՔԻ) - ԱԻԵՏԻՔԻՆ (№ 7640), ՉՄԷԼՔԻՍԷԹ (№ 9422):

Արձանագրություններում կիրառվում է նաև համառոտագրություն փակագիր (չի գատուրա) տեսակը: Մեկ (սակավ դեպքերում երկու կամ երեք) մայր տառի (տառերի) հիման վրա այլ տառերի անհրաժեշտ ստեղծերի միակցմամբ կազմվում է ամբողջական բառամաս արտահայտող անուն կամ որոշ խմբաբանակի բառակապակցություն: Ի տարբերություն կցագրի, փակագիրը գրվում է



առանձին եւ վերծանելու համար երբեմն ջանքեր են պահանջվում<sup>15</sup>: Փակագրերով աչքի են ընկնում Արցախ-Ուտիքի դպրոցում պատրաստված կաշեկազմերին արված արձանագրությունները, որոնք փակագրված անձնանուններ են: Ձեռագրերի կազմերի արձանագրություններում հանդիպում են հետեւյալ փակագրերը.

\_ ԳՐԻԳՈՐ (№ 2678, 2783, 4626, 9067),

\_ ԵՐԷՅ (№ 3479, 3525),

\_ ԹՎԻՆ (№ 3032, 2582, 5653, 7576),

\_ ԿԱԶՄԵՅԱԻ (№ 1809),

\_ ԿԱՐԱՊԵՏ ԱԲԵՂԱ (№ 9422),

\_ ՂԱԶԱՐ (№ 38, 330, 1078, 2546, 3685),

\_ ՄԵԽԹԱՐ (№ 2389, 3971, 4422, 6427, 7633),

\_ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ (№ 982):

Պետք է նշել, որ ձեռագրերի կազմերի արձանագրություններում նույնպես հանդիպում են «աւ» երկբարբառի վերջավանկի «աւ»-ի փոխարեն «օ»-ի կիրառումը՝ ԸՆԿՂՄԵՅՈ (№№ 7607, 7856):


<sup>15</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան նշվ. աշխ., էջ 51:

Ձեռագրերի կազմերի արձանագրությունները նույնպես դրոշմված կամ փորագրված են միջնադարյան եւ բարբառախառն գրաբարով: Միջնադարյան գրաբարով արձանագրություններ կան Կիլիկիայում, Կ. Պոլսում, Լիմ անապատում, Նոր Ջուղայում պատրաստված կազմերին, թեև դրանցում եւս նկատելի են բարբառային ներթափանցումներ: Բարբառային արձանագրություններն արտացոլում են տեղական խոսվածքների բնորոշ, յուրատիպ նրբերանգներ եւ որոշակի պատկերացում են կազմել տալիս հայոց լեզվի բառապաշարի ու զարգացման առանձին փուլերի մասին: Օրինակ՝ 1723 թ. Կեոզլովում (եվպատորիա) պատրաստված խաչին (ձեռ. № 8087) արձանագրված է. «ՅԻՇ(Ա)-Տ(Ա)Կ Է /Ս(ՈՒՐ)Բ ՆՇԱՆՍ /ԵԻ ԲԱՐԵ/ԽՕՍ, ՕՐ Ի ԵՂ/ԵԱԼ ԵՐԹԵԻԿԵԿՕՂ ՎԱՃ/ԱՌԱԿԱՆԱՅՆ, Ի ԴՈՒ/ՌՆ ՕՐ Ի ԵՂԵԱԼ Ս(ՈՒՐ)Բ Ա(ՍՏՈՒԱ)Ծ/ԱԾՆԻ ԵԿԵՂԵ/ՅԻՆ, ԹԸ/ՎԻՆ ՌՃ/ՀԲ (1723)-ԻՆ» (նկ. 9): ԺԸ դարում պատրաստված մեկ այլ խաչի վրայի արձանագրությունից տեղեկանում ենք, որ ոմն Դուկաս Կուլս Մարիամին է նվիրաբերել մի ավետարան (ձեռ. № 8694). «ՅԻՇ(Ե)Ա(Յ) ԳԷՐ ԾԱ/ՌԱ[ՅԻՆ] ՔՈ ՂՈՒԿԱՍԻՍ, ԼՈ/ԻՍԱՎՈՐԵԱ ԾՆՈՂԱՅՍ /ԻՄ ԱՌԱՔ(Ե)ԼԻՆ Եւ /ՄԱՆԱԽԱՆԱՄԸ, //ՎԱՍԸՆ /ՀՈՔՈ ԾՆՈՂԱՅՍ /Ս(ՈՒՐ)Բ ԱՎԷԳԱՐԱՆՍ ԸՆԾ/ԱՅԵՅԻ ԿՈՒ(Յ)Ս ՄԱՐԻԱՄԻՆ, /ՈՐ ՈՒՐ ՈՒՐԵՔ ԿՈՒ(Ս)Ա/ՆՔ/Ն ԲՆԱԿԻՆ ԱՆԳ ՅԻՇԱԳԱԿԷՆ»<sup>16</sup> (նկար 10):

Արձանագրություններում կիրառված են բարբառային ձևեր ունեցող մի շարք անուններ ու բառեր. ԱԲԿԱՐ (№ 1987), ԱՐԾԱԳԱՊԱՏ (№ 2582), ԱՎԵՏԻԿ (№ 284), ԳԱՐՊԻԷԼ (№ 7088), ԳԻՈՐՔ (№ 5646), ԳՈՒԼՕ (№ 5430), ԳՐԻՂՈՐ (№ 7603), ԳԱԳԵՕՍ (№ 4240), ԳԱԽՕ (№ 3717), ԽԱՅՐ (№ 6420), ԽԷՐԱՅՊԵՏ (№ 5201), ԽԼԽԱԹ (№ 157), ԽՈՌՈՄՄԻՄ (№ 253), ԿԱՐԱԲԵԳ (№ 4276), ԿԱՌԱՊԷՏ (№ 10687), ԿՈՂԱԿԵՅԻ-ԿՈՂԱԿԻԿ (№ 7646), ՄԷՅՐԷՄ (№ 5159), ՅՈՒԱՆ (№ 5430), ՊՈՒՂՈՒՍ (№ 157), ԸՍՏԸՓԱՆՈՍ (№ 3862), ՓՈՂԵՅԷՔՍ (№ 3829), ՔՈՒՐՈՁԵ (№ 3528) եւ այլն: Երբեմն հանդիպում է Յ կիսաձայնի անհարկի կիրառում, այսինքն՝ բառի քմայնացման (պալատիզացիայի) երեւույթ<sup>17</sup>. ԱՂԱՅԻԿ (№ 10522), ՁԵՌԱՅԳՈՐԾ (№ 8187), ՂԱՂԱՅՐ (№ 8888), ՅԻՇԱՅՏԱԿ (№ 6748, 9658), ՆԱԽԱՅՎԿԱՅ (№ 7237), ՇՈՅՂԱՅԿԱԹ (№ 5159), ՍԱՅ (№ 7642, 7842, 7857):

<sup>16</sup> Երկու արձանագրություններում էլ նկատի չունենք փորագրիչների սխալները:

<sup>17</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 54:



նկ. 9

Ձեռ. 8087, Բ փեղկ. 1723 թ., Սբ. Աստվածածին (Կեոզլով):



Նկ. 10

Ձեռ. 8694, Բ փեղկ. ԺԸ դ.:

Ինչպես իրավամբ նշում է Գ. Գրիգորյանը. «Պատմական յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրոշմել հայոց անուն-ազգանունների վրա»<sup>18</sup>: Բուն Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս հայկական անունների կողքին սկսում են կիրառվել եւ ճանաչում ստանալ օտարամուտ բազմաթիվ անուններ: Առանձնակի հիշատակելի է ժէ-ժԸ դդ. Պարսկաստանում կիրառված անձնանունները, որոնց վրա, բնականաբար, մեծ է տեղական լեզվամտածողության ու սովորույթների ազդեցությունը: Այդ անուններից են՝ ԼէլիհոՆՐԱ, ԻՓՐԻԹէ, ՄԱԱՍՊՈՒԹ, ԳՇԵՈՒՆ, ՍՈՒԼԹԱՆՈՒՄ, ՄԱՄ, ՎԱԼԱԹ (NՁ 2399, 1657 թ.), ԱՂԱՄԱԼ, ՁԻՔ ՊԵՏՐՈՍ, ՄէՐՏԱՏԻԿ (NՁ 200, 1658 թ.), ԽԱԹԱՅէ (NՁ 347, 1668 թ.), ԱԱԶԱՏէ (NՁNՁ 577, 1679, 1696-98 թթ.), ՅՈՒՂԻՏէ (NՁ 4017, 1684 թ.), ՔԱԼԱՆԹԱՐ ԽՕՋԱՅ ԱՎԵՏ (NՁ 4941, 1692 թ.), ՅԱՐՈՒԹԵՆ (NՁ 577, 1696 թ.), ԱՂԱԹԵՂէ (NՁ 8110, 1698 թ.), ԲՕՆԻՖԻՆԹՈՒՐ (NՁ 2034, 1703 թ.), ՍԱՎԱՐ (NՁ 10704, 1710 թ.) եւ այլն: Հայոց անձնանունների խաչտաբղետ պատկերի ենք հանդիպում ժՁ-ժԹ դարերում ստեղծված խաչերի եւ մետաղե ժապավենների վրայի արձանագրություններում: Նրանցում հիշատակվում են՝ ՓԻՐԱՍ ԱՂԱՅ (NՁ 316, ժՁ դ.), ԵԱԻԶԵՊԻ (NՁ 7679, 1607 թ.), ՄէՄէԹ (NՁ 959, 1634 թ.), ՓԻՐԲԱԲ (NՁ 237, 1653 թ.), ՄՈՊԱՌ (NՁ 157, ժէ դ.), ՊԱԼԻ (NՁ 214, ժէ դ.), ԷՊՐԻՄԻՄԱՅ (NՁ 3335, ժԸ դ.), ԿՈՒՏՐԱԹ (NՁ 5594, ժԸ դ.), ՆԱԶԼՈՒՆ (NՁ 253, ժԸ դ.), ՇԱՀՏԻ (NՁ 357, ժԸ դ.), ՈՒՂՈՒՐՍՕԼԹԱՆ, ՍէՎՐԽԱՆ, ՕՂԱՆՓԱՇԱՅ (NՁ 4060, ժԸ դ.), ԵՂՍԱՆ (NՁ 3238, 1838 թ.), ԱՍԼԽԱՆ, ԽէՐԱԹ (NՁ 3716, ժԹ դ.) եւ ուրիշներ: Տեղային բնորոշում ունեցող (օրինակ՝ ԿԵՕԶԼէՎՅԻ ՁՄՐՈՒԹ NՁ 7576, ՎԱՆԵՅԻ ԱԹԱՆ NՁ 6748) եւ այլ (օրինակ՝ ԱՄԻՐԱՂԱՅ NՁ 9841, ԽԱԹՓԱՇԱՅ NՁ 7756) մականուններից բացի արձանագրություններում հիշատակվում են՝ ՁԻՔ ՊԵՏՐՈՍ (NՁ 200), ԿԾԻԿԵՆՅ ՍԱՐԳԻՍ (NՁ 10848), ՈՒՍՍԱ ՄԱՐՏԻՐՈՍ ՂԱԶԱՐ (NՁ 6766), ՔԱԼԱՆԹԱՐ ԽՕՋԱՅ ԱՎԵՏ (NՁ 4941):

Ուշ միջնադարյան արձանագրություններում օտարազգի անձնանուններին զուգահեռ կիրառվել են մի շարք արտահայտություններ, որոնք կենսունակ են առ այսօր. դրանցից են՝ ՀԱԼԱԼ-արդար (NՁNՁ 205, 3848), ՏՈՍՏԻ-բարեկամ (NՁ 3867), ՈՒՍՍԱ-վարպետ (NՁ 5580, 6766)<sup>19</sup>:

Արձանագրություն-հիշատակարանները երբեմն գրված են չափածո: Այդպիսին է 1821 թվականին Եղզատում պատրաստված NՁ 10379 ձեռագրի (Թ. Մարկոսյան հավաքածու) արձանագրության արձանագրությունը<sup>20</sup> (նկ. 11).

<sup>18</sup> Տե՛ս Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 56:

<sup>19</sup> Հմմտ. նույն տեղում, էջ 54:


<sup>20</sup> Չափածո արձանագրությունների մասին մանրամասն տե՛ս Ս. Գևորգյան, Հայ վիմագիր բանաստեղծությունը, Երևան, 1989: Հեղինակն արձանագրությունները բնութագրելիս նկատում է. «... որ հայ վիմագիր չափածո ստեղծագործությունները, լինեն դրանք պատմական եւ մշակույթի հուշարձաններին փորագրված հիշատակարաններ, թե տապանագրեր, դարերի ընթացքում պարզ հիշատակագրություններից վեր են անցել բովանդակալից եւ գեղարվեստական մարմնացում եւ կանոնիկ ձև ստացած ուրույն ստեղծագործությունների, որոնք միաժամանակ, ինչպես առհասարակ վիմագիր արձանագրությունները,

«ԱԻԵՏԱՐԱՆԸՍ ՓՐԿՉԱԿԱՆ,  
 ԱՐԾԱԹԱՊԱՏ ՈՍԿԵԶՕԾՄԱՆ,  
 ՈՐՔ ՀԱԻԱՏՈՎ ԽՆԴՐԵՆ ՀԱՄԱՅՆ  
 ԲՈՂՈՐՈՎԻՄԲ ԲՈՅԺ ԱՍՏ ԳԼՏԱՆ:  
 ԱՅՐ ՏԷՐ ՅԱԿՈՒՐ ՈՐԹԷԳԻՐԵԱՆ  
 ՅԵՏ ՎԱՂՃԱՆԻՆ ԶՍԱ ԸՆԾԱՅՄԱՆ  
 ԵՏ ՅԻՇԱՏԱԿ ԶԱՐՄԻՅՆ ՀԱՄԱՅՆ  
 ՅԱ(ՍՏՈՒԱ)ԾԱԾՆԱՅ ՍՐԲՈՅ ԽՈՐԱՆ  
 ՈՐ Ի ԵՕՉՂԱՏ ԲԸՆԱԿԱՐԱՆ,  
 Ի ԹԻԻ ՓՐԿՉԻՆ ՄԵՐՈՅ ԼԸՐՄԱՆ  
 ՀԱԶԱՐ ՈՒԹ ՀԱՐԻԻՐ ԻԱ (1821) ԼԸՄԱՆ,  
 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀՆԳԵՏԱՍԱՆ»:

Չափածո է նաեւ 1704 թ. Կեսարիայում պատրաստված № 10411 Սաղ-  
 մոսարանի առաջին փեղկի՝ Դավիթ մարգարէի բարձրաքանդակի ներքեւի ար-  
 ձանագրութիւնը (նկ. 12)։

«Գ(Ք)ՆԱՐ Ի ԶԵՌԻՆ ԴԱԻԹ ՄԱՐԳԱՐԷ,  
 ԶԵՐԳ Ս(ՈՒՐ)Բ ՍԱՂՄՈՍԻՆ ՀՈԳԻՈՎ ԶԱՐԴԱՐԷ»:

կարեւոր ու հավաստի սկզբնաղբյուրներ են հայ ժողովրդի պատմության տարբեր կողմերի  
 լուսաբանման գործում» (տե՛ս նույն տեղում, էջ 53)։



Նկ. 11

Ձեռ. 10379, թիկունք. 1821 թ., երկրորդ:



Նկ. 12..

Ձեռ. 10411, Ա. փեղկ. 1704 թ., Կեսարիա: